

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ  
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԵԳԱՆՅԱՆ ԼԻԱՆԱ ՌՈԲԵՐՏԻ

Na/K-ԱԿԱՆ ՊՈՍՊԻ  $\alpha$  ԵՆԹԱՄԻԱՎՈՐԻ ԹԵՐՖՈՒԼԿՑԻԱՆ ՈՐՊԵՍ ՍԱՐԿՈՄԱ-180-Ի  
ԶԱՐԳԱՑՄԱՆ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՑԻՍՊՂԼԱՏԻՆԻ ԵՎ ԳԵՐՑԱԾՐ ՀԱՃԱԽՈՒԹՅԱՆ  
ԷԼԵԿՏՐԱՄԱԳՆԻՍԱԿԱՆ ԱԼԻՔՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԹԻՐԱԽ

Գ.00.02 – Կենսաֆիզիկա մասնագիտությամբ  
կենսաբանական գիտությունների թեկնածուի  
գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՍԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2014

---

МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ И НАУКИ РА  
ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

ЕГАНЯН ЛИАНА РОБЕРТОВНА

ДИСФУНКЦИЯ  $\alpha$  СУБЪЕДИНИЦЫ Na/K НАСОСА КАК ОСНОВНАЯ ПРИЧИНА РАЗВИТИЯ  
САРКОМЫ-180, И МИШЕНЬ ВОЗДЕЙСТВИЯ ЦИСПЛАТИНА И СВЕРХНИЗКОЧАСТОТНЫХ  
ЭЛЕКТРОМАГНИТНЫХ ВОЛН

АВТОРЕФЕРАТ

диссертации на соискание ученой степени  
кандидата биологических наук по специальности  
03.00.02-Биофизика

ЕРЕВАН 2014

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԿԳՆ Բժշկականաբանական միջազգային հետրուհական ուսումնական կենտրոնում:

Գիտական ղեկավար՝

կենս. գիտ. դոկտոր,  
պրոֆեսոր Ս.Ն. Հայրապետյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, կենս. գիտ. դոկտոր,  
պրոֆեսոր Ա.Հ. Թոշունյան

կենս. գիտ. դոկտոր,  
պրոֆեսոր Ռ.Գ. Քամայան

Առաջատար կազմակերպություն՝ Օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական Կենտրոնի Ա.Լ. Մնջոյանի անվ. նուրբ օրգանական քիմիայի ինստիտուտ

Ատենախոսության պաշտպանությունը տեղի կունենա 2014թ. հունիսի 17-ին, ժամը 14<sup>00</sup>-ին, Երևանի պետական համալսարանում գործող ՀՀ ԲՈՀ-ի Կենսաֆիզիկայի 051 մասնագիտական խորհրդի նիստում (0025, Երևան, Ալեք Սանուկյան փ. 1, ԵՊՀ, կենսաբանության ֆակուլտետ):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանում:

Ատենախոսության սեղմագիրն առաքված է 2014թ. մայիսի 17-ին:

051 Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,  
կենս. գիտ. թեկնածու, դոցենտ

Մ.Ա. Փարսադանյան

Тема диссертации утверждена в Медико-биологическом международном поствузовском учебном центре при МОН РА

Научный руководитель:

доктор биол. наук,  
профессор С.Н. Айрапетян

Официальные оппоненты:

член-корреспондент НАН РА, доктор  
биол. наук, профессор А.А. Трчунян

доктор биол. наук,  
профессор Р.Г. Камалян

Ведущая организация:

Институт тонкой органической химии им. А.Л. Мнджояна научно-технологического центра органической и фармацевтической химии

Защита диссертации состоится 17-го июня 2014г. в 14<sup>00</sup> часов, на заседании Специализированного совета 051 по Биофизике ВАК РА при Ереванском государственном университете (0025, Ереван, ул. Алека Манукяна 1, ЕГУ, биологический факультет).

С диссертацией можно ознакомиться в библиотеке Ереванского государственного университета.

Автореферат диссертации разослан 17-го мая 2014г.

Ученый секретарь Специализированного совета 051,  
кандидат биол. наук, доцент

М.А. Парсаданян

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

**Հիմնականորեն արդիականությունը:** Քաղցկեղն աշխարհում տարեկան ավելի քան 6 մլն մարդու մահվան պատճառ է դառնում (World Health Organization 2011): Այժմ հաստատված է, որ քաղցկեղային հյուսվածքը գերհիդրատացված է և ջրի պարունակությունը կարող է հասնել մինչև 90%-ի: Գերհիդրատացիան ծառայում է ախտորոշիչ հիմնական ցուցանիշներից մեկը (Carter 1984): Հայտնի է նաև, որ քաղցկեղային բջջի կողմից օքսիդատիվ ունակության անկումն ուղեկցվում է բջջի հիդրատացիայով և միտոքոնդրիումների ուռչեցմամբ (Damadian 1972):

Բջջի հիդրատացիան դինամիկ ցուցանիշ է, որի միջոցով իրականացվում է բջջի ֆունկցիոնալ ակտիվության մետաբոլիկ կարգավորումը, ինչպիսիք են բջջաթաղանթի գրգռականությունը, քիմիական զգայունությունը, սպիտակուցների ակտիվությունը, և բջջի պրոլիֆերացիան (Parsegian 2005, Danielyan et al., 1999): Բջջի ուռչելը տանում է բջջաթաղանթում ֆունկցիոնալ ակտիվ մոլեկուլների, այդ թվում և Na/K-ական պոմպի, քանակի աճին, մինչդեռ բջջի սմբելը բերում է հակառակ արդյունքի (Ayrapetyan 1980): Անհրաժեշտ է նշել, որ Na/K-ական պոմպի աշխատանքային ակտիվությունը կապված է հատկապես իր  $\alpha$  ենթամիավորի հետ, և որ այն իր ներդրումն ունի  $Ca^{2+}$ -ի փոխանակության գործում (Xie et al., 2002):

Ներկայացված աշխատանքի իրականացման համար հիմք է ծառայել այն ենթադրությունը, որ Na/K-ական պոմպի  $\alpha$  ենթամիավորի թերֆունկցիան է բերում ներբջջային ազդանշանային համակարգի թերացման, որն էլ ոչ կանոնավոր պրոլիֆերացիայի, նաև քաղցկեղի, զարգացման պատճառ է դառնում: Ենթադրությունը հաստատելու կամ հերքելու նպատակով իրականացվեցին մի շարք փորձեր՝ այդ թվում նաև առողջ և սարկոմա-180 կրող մկների տարբեր հյուսվածքներում բջջաթաղանթի հետ  $^3H$ -ուաբայինի կապվածության և հիդրատացիայի համեմատական ուսումնասիրությունը, ինչպես նաև այս պարամետրերի զգայունությունը ցիսպլատինի հանդեպ:

Ցիս-դիամինոլիբրոպլատինը կամ ցիսպլատինը ( $cis-Pt(NH_3)_2Cl_2$ ;  $cisPt$ ) հակաքաղցկեղային կարևոր միջոց է (Van Basten et al., 1997): Այն վնասում է ԴՆԹ-ն՝ ցուցաբերելով ցիտոտոքսիկ ակտիվություն: Հայտնի է նաև, որ ներբջջային ցիսպլատինի միայն 1%-ն է փոխազդում կորիզային ԴՆԹ-ի հետ: Ավելին, ցիսպլատինը կարող է մուտացիաների պատճառ դառնալ և, հետևաբար, իր հերթին կարող է նորագոյացումների սկիզբ դնել (Perez 1998): Այստեղից խնդիր է առաջանում բարձրացնել ցիսպլատինի արդյունավետությունը՝ զուգահեռաբար իջեցնելով դրա չափաբաժինը:

Հաստատված է, որ գերցածր հաճախության էլեկտրամագնիսական ալիքները (ԳՅՀ ԷՄԱ) ունեն հաճախությունից կախված ազդեցություն ջրի և ջրային լուծույթների ֆիզիկաքիմիական հատկությունների վրա, որոնք առավել արտահայտված են 4Հց և 8Հց (2,5մՏ) մշակման ժամանակ (Ayrapetyan 2006, Ayrapetyan 2012): Հայտնի է, որ 4Հց և 8Հց (2,5մՏ) ԷՄԱ-ն, ունենալով դեհիդրատացնող ազդեցություն հյուսվածքների վրա, ցուցաբերում է արտահայտված հակաքաղցկեղային ազդեցություն մկների սարկոմա-180 հյուսվածքի վրա (Ayrapetyan et al., 2008): Այսպիսով, փոփոխելով հիդրատացիան կամ

ջրի կառուցվածքային վիճակը՝ հնարավոր կլինի փոփոխել քաղցկեղային բնույթի բջջի զգայունությունը ցիսպլատինի հանդեպ: Այս առումով ԳՑՀ ԷՄԱ-ն կարելի է դիտարկել քաղցկեղի դեմ պայքարի արդյունավետությունը բարձրացնող հուսալի միջոց:

**Աշխատանքի նպատակը և ուսումնասիրվող խնդիրները:** Ներկայացվող աշխատանքի նպատակն է ի հայտ բերել նորմալ և քաղցկեղային բջիջների բջջաթաղանթներում առկա տարբերությունները Na/K-ական պոմպի  $\alpha$  ենթամիավորի  $\alpha_1$ ,  $\alpha_2$  և  $\alpha_3$  ենթատեսակների ֆունկցիոնալ տեսանկյունից, ինչպես նաև կարևորել հիդրատացիայի դերը դիտարկվող երևույթներում: Իրականացված աշխատանքների հիման վրա հնարավոր կլինի եզրակացություններ անել քիմիաթերապիայում նոր մեթոդներ ներդնելու համար, հատկապես ցիսպլատինի ներգործության արդյունավետությունը բարձրացնելու համար: Այս նպատակով իրականացվել են հետևյալ աշխատանքները.

- Որոշվել և համեմատվել են առողջ (Ա) և սարկոմա-180 կրող (ՄԿ) մկների տարբեր հյուսվածքների հիդրատացիայի մակարդակները:
- Ուսումնասիրվել է Ա և ՄԿ մկների տարբեր հյուսվածքներում ուաբայինի չափաքանակից կախված հիդրատացիայի և  $^3\text{H}$ -ուաբայինի կապվածությունը:
- Ուսումնասիրվել է Ա և ՄԿ մկների տարբեր հյուսվածքների բջջաթաղանթներում  $^3\text{H}$ -ուաբայինի կապվածությունը Na/K-ական պոմպի  $\alpha$  ենթամիավորի  $\alpha_1$ ,  $\alpha_2$  և  $\alpha_3$  ենթատեսակների հետ:
- Դիտարկվել է ցիսպլատինի ազդեցությունը Ա և ՄԿ մկների տարբեր հյուսվածքների հիդրատացիայի վրա:
- Պարզվել է Ա և ՄԿ մկների տարբեր հյուսվածքներում ցիսպլատինի ազդեցությունը  $^3\text{H}$ -ուաբայինի կապվածության վրա՝ դիտարկվել է օրգանիզմի առողջ և հիվանդ վիճակում ցիսպլատինի ազդեցությունը Na/K-ական պոմպի  $\alpha$  ենթամիավորի  $\alpha_1$ ,  $\alpha_2$  և  $\alpha_3$  ենթատեսակների վրա:
- Ուսումնասիրվել են 4Հց և 8Հց (2.5մՏ) ԷՄԱ-ի հնարավոր ներգործությունները սարկոմա-180 հյուսվածքի հիդրատացիայի և  $^3\text{H}$ -ուաբայինի կապվածության վրա:
- Ուսումնասիրվել են սարկոմա-180 հյուսվածքի ցիսպլատինով դեհիդրատացման վրա 4Հց և 8Հց ԷՄԱ-ի ներգործությունը:

**Աշխատանքի գիտական նորույթը:**

- Ստացված տվյալների վերլուծությունը թույլ տվեց հիդրատացիան դիտարկել որպես գերզգայուն պարամետր օրգանիզմում պաթոլոգիկ օջախի առկայության դեպքում:
- Na/K-ական պոմպի  $\alpha$  ենթամիավորի  $\alpha_1$ ,  $\alpha_2$  և  $\alpha_3$  ենթատեսակների ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ պոմպի  $\alpha_3$  ենթատեսակի թերֆունկցիան այն առաջնային մեխանիզմն է, որը չգրգռվող հյուսվածքներում տանում է բջջի գերհիդրատացիայի և պրոլիֆերացիայի ոչ նորմալ ակտիվացման, որը և կհանգեցնի քաղցկեղի: Իսկ գրգռվող հյուսվածքներում Na/K-ական պոմպի  $\alpha_3$  ենթատեսակի թերֆունկցիան հանգեցնում է ապոպտոզի:

- Պարզվեց, որ ցիսպլատինի ազդեցությամբ տեղի է ունենում  $\alpha$  ենթատեսակի ուաբայինի նկատմամբ խնամակցության մեծացում:
- Ցույց տրվեց, որ ցիսպլատինի համար որպես թիրախ ծառայում է պոմպից անկախ բջջի ծավալ կարգավորող մեխանիզմ, որը տանում է հիդրատացիայի գրգռվող հյուսվածքներում (մկաններ) և դեհիդրատացիայի չգրգռվող հյուսվածքներում (թոքի, լյարդի, փայծաղի, երիկամի պարենխիմներ, սարկոմա-180):
- Ապացուցվել է, որ 4Հց կամ 8Հց ԷՄԱ մշակում ստացած խմելու ջրերն ունեն հակաքաղցկեղային ազդեցություն: Սակայն, դրանց համատեղումը ցիսպլատինի կուրսի հետ քաղցկեղային հյուսվածքում ունի հաճախությունից կախված հակադարձ ազդեցություն, այն է՝ 4Հց մշակված ջրի կիրառման դեպքում դիտվում է հակաքաղցկեղային ազդեցության ուժեղացում, իսկ 8Հց-ի դեպքում՝ հակառակը, դիտվում է ցիսպլատինի ազդեցության թուլացում:

**Աշխատանքի տեսական և կիրառական նշանակությունը:**

- Աշխատանքում ստացված արդյունքներն ունեն տեսական նշանակություն, որովհետև ստացված տվյալները թույլ են տալիս բջջի հիդրատացիայի բարձրացումը դիտարկել որպես բջջի պաթոլոգիկ վիճակի ունիվերսալ ցուցանիշ, որը հիվանդությունների զարգացման, ծերացմանը նախորդող գործընթացների ուսումնասիրությունների համար նոր մոտեցումներ է առաջարկում:
- Ատենախոսական աշխատանքում ստացված արդյունքներն ունեն տեսական նշանակություն, որովհետև Na/K-ական պոմպի  $\alpha$  ենթատեսակի ֆունկցիոնալ վիճակը կարելի է դիտարկել որպես քաղցկեղի զարգացման գործում կարևոր տարր, որն ախտորոշման ու բուժման նոր ուղիների բացահայտման հնարավորություն է տալիս:
- Ատենախոսական աշխատանքում ստացված արդյունքներն ունեն կիրառական նշանակություն, որովհետև պարզվել է, որ ցիսպլատինի համար, ի թիվս ներբջջային այլ տարրերի, թիրախ է հանդիսանում նաև Na/K-ական պոմպի  $\alpha$  ենթատեսակը, որն այս դեղամիջոցի ազդեցության արդյունավետությունը բարձրացնելու նոր ասպարեզներ է բացում:
- 4Հց ԷՄԱ մաշկված ջուրը մեծացնում է ցիսպլատինի հանդեպ բջջի զգայունությունը: Այն ունի կիրառական նշանակություն, քանի որ այն կարելի է կիրառել քիմիոթերապիային զուգընթաց՝ ի տարբերություն 8Հց մշակում անցած ջրի, որն էական բարերար ազդեցություն չունենալով՝ կլինիկայում կիրառական նշանակություն չունի:

Այս ուսումնասիրությունները հնարավորություն են տալիս մշակել նոր մեթոդներ հիվանդությունների կանխարգելման, վաղ ախտորոշման, կլինիկայում ցիսպլատինի արդյունավետությունը բարձրացնելու և զուգահեռաբար իջեցնելու դրա չափաբաժինը: Դա հնարավորություն կտա իջեցնել կամ խուսափել բուժման գործընթացում ի հայտ եկող կողմնակի երևույթները, բարձրացնել դեղամիջոցների, տվյալ պարագայում նաև ցիսպլատինի թիրախային ազդեցության արդյունավետությունը, ինչպես նաև բուժման

գործընթացի մեջ ներառել քաղցկեղի այնպիսի տեսակներ, որոնք ցիսպլատինի հանդեպ կայուն են:

**Պաշտպանության առաջադրված հիմնադրույթները:**

- Հյուսվածքի հիդրատացիան ծառայում է որպես օրգանիզմում առկա պաթոլոգիկ օջախի առկայության ախտորոշիչ չափանիշ:
- $\alpha_3$ -ից կախյալ ներբջջային ազդանշանային համակարգը ղեկավարող բջջի հիդրատացիան կարևոր մեխանիզմ է: Այն գրգռվող ու չգրգռվող հյուսվածքներում ունի տարբեր բնույթ: Այս համակարգի թերֆունկցիան պատճառ է դառնում չգրգռվող հյուսվածքներում բջջի հիդրատացիայի բարձրացման և պրոլիֆերացիայի ոչ նորմալ ակտիվացման, որը և տանում է քաղցկեղի առաջացման:
- Ցիսպլատինը ղեհիդրատացնում է սարկոմա-180-ը՝ ճնշելով վերջինիս ինտենսիվ զարգացումը: Այստեղ թիրախ է հանդիսանում Na/K-ական պոմպի  $\alpha_3$  ենթատեսակը, որի մոտ դիտվում է ուաբայինի հանդեպ խնամակցության աճ:
- Ուաբայինի հանդեպ Na/K-ական պոմպի  $\alpha$  ենթամիավորի խնամակցության վրա ցիսպլատինի ներգործությունը կախված է նախնական հիդրատացիայի մակարդակից:
- Խմելու համար օգտագործվող 4Հց և 8Հց ԳՅՀ ԷՄԱ մշակված ջրերն ունեն հակաքաղցկեղային ներգործություն օրգանիզմի վրա՝ ղեհիդրատացնում են սարկոմա-180 հյուսվածքը և մոդուլացնում են ուաբայինի նկատմամբ բջջաթաղանթի խնամակցությունը:
- 4Հց ԳՅՀ ԷՄԱ-ով մշակված խմելու ջուրը նպաստում է ցիսպլատինի հակաքաղցկեղային ազդեցության արդյունավետության բարձրացմանը:
- 8Հց ԳՅՀ ԷՄԱ-ով մշակված խմելու ջուրը ցիսպլատինի համադրությամբ չի նպաստում վերջինիս հակաքաղցկեղային ազդեցությանը:

**Ատենախոսության փորձաքննությունը և հրապարակումները:** Ատենախոսությունը փորձաքննության է ենթարկվել ՀՀ ԿԳՆ Բժշկական-սաբանական միջազգային հետրուհական ուսումնական կենտրոնի ընդլայնված նիստում: Ստացված արդյունքները ներկայացվել են հետևյալ գիտաժողովներում՝ 2<sup>nd</sup> International Biophysics Congress and Biotechnology at GAP & 21<sup>st</sup> National Biophysics Congress (Diyarbakir, Turkey, 2009); NCRI Cancer Conference (Liverpool, UK, 2010); The impact of EMF and infra-sound at higher background ionizing radiation (Tsakhkadzor, Armenia, 2011); 4<sup>th</sup> international conference on drug discovery & therapy (Dubai, UAE, 2012):

**Հրատարակված աշխատանքները:** Հետազոտության հիմնական արդյունքները արտացոլված են 6 գիտական հրատարակություններում, որոնցից 3 հոդված:

**Աշխատանքի կառուցվածքը և ծավալը:** Ատենախոսական աշխատանքը կազմված է ներածությունից, գրական ակնարկից, փորձարարական մասից, ստացված արդյունքներից և դրանց քննարկումից, ամփոփումից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից, որի մեջ ներառված են 166 անուն հղումներ:

Աշխատանքում ներկայացված են 19 նկար, 13 աղյուսակ: Այն շարադրված է 108 մեքենագրական էջում:

### ՆՅՈՒԹԵՐ ԵՎ ՄԵԹՈԴՆԵՐ

**Նյութեր:** Որպես ֆիզիոլոգիական լուծույթ (ՖԼ) կիրառվել է Թիրոդեի լուծույթը հետևյալ բաղադրությամբ՝ 137 NaCl; 5.4 KCl; 1.8 CaCl<sub>2</sub>; 1.05 MgCl<sub>2</sub>; 5 C<sub>6</sub>H<sub>12</sub>O<sub>6</sub>; 11.9 NaHCO<sub>3</sub>, 0.42 NaH<sub>2</sub>PO<sub>4</sub> (մՄ) և միջավայրի ջրածնային ցուցիչը բերվել է pH=7.4-ի:

Թաղանթի վրա պոմպի ակտիվ միավորների քանակը որոշելու համար կիրառվել է ռադիոակտիվ [<sup>3</sup>H]-ուաբաին (PerkinElmer, Boston, MA, USA), որն ունեցել է 12 Ci/մՄ սպեցիֆիկ ակտիվություն:

Իզոտոպային չափումների ընթացքում կիրառվել է սցինցիլացիոն խառնուրդ (Բրայի սցինցիլացիոն լուծույթ)՝ 1 լիտրի համար հաշվարկված հետևյալ բաղադրությամբ. 4գ PPO (2,5-դիֆենիլօքսազոլ, Yick-Vik chemicals & pharmaceuticals, Չինաստան), 0,2գ POPOP (1,4-բիս[-2-(5-ֆենիլօքսազոլիլ)]-բենզեն, Yick-Vik chemicals & pharmaceuticals, Չինաստան), 60գ նավթալին (Химмед, ՌԴ), 200մլ 98% էթանոլ՝ ավելացվելով մոտ 800մլ 98% (2,5-դիֆենիլօքսազոլ, Yick-Vik chemicals & pharmaceuticals, Չինաստան) 1.4-դիօքսան՝ լուծույթի ծավալը հասցնելով 1L-ի :

**Կենդանիներ:** Փորձերի ընթացքում կիրառվել են ոչ ազգակցական խաչասերումներով բազմացված 18-20գ քաշով ալբինոս արու մկներ: Կենդանիները ձեռք են բերվել Բժշկականսարանական միջազգային հետբուհական ուսումնական կենտրոնի կենդանանցից (Երևան, ՀՀ): Կենդանիների հետ իրականացվող բոլոր գործողությունները կատարվել են «Կենդանիների հանդեպ էթիկայի ուղեցույց»-ի կանոններին համապատասխան:

**Սարկոմա-180-ի ներպատվաստումը:** Իրականացվող փորձերի համար սարկոմա-180 կրող մկներ ունենալու համար կիրառվել է համապատասխան հյուսվածքի հոմոգենատը: Վերջինս ստացվել է սարկոմա-180-ով տառապող մկից: Անջատված հյուսվածքից հեռացվում են կողմնակի մնացորդները՝ մեռուկացված հատվածներ, արյան մակարդուկներ, շճաթաղանթ և այլն: Հոմոգենատը ներպատվաստվում է առողջ մկան առջևի թաթի տակ՝ հաշվի առնելով այնտեղ առկա ավշային հանգույցների խտությունը, որը նպաստավոր պայմաններ է ստեղծում ներմուծված հյուսվածքի զարգացման համար:

**Փորձերի ընթացքը:** Փորձնական մկները բաժանվել են խմբերի, յուրաքանչյուրում 10-ական մուկ, որոնք տեղավորվել են առանձին վանդակներում: Մշտապես ապահովվել է օդի 25-27°C ջերմաստիճան:

Որպես խմելու ջուր մկները ստացել են մաքուր, գործարանային շշալցված ջուր, իսկ մկների այն մասը, որոնք նախատեսված են եղել ԳՑՀ ԷՄԱ-ով (4Հգ և 8Հգ) մշակված ջրի ազդեցությունն ուսումնասիրելու համար, խմելու համար ստացել են համապատասխան ձևով մշակված ջուր: Փորձերի մյուս փուլերում կենդանիների համապատասխան խմբերը ներորովայնային սրսկվել են ուսումնասիրվող նյութ (ցիսպլատին (Cisplatin Ebeve (Ավստրիա) (0.002մգ/գ, որը համապատասխանում է 0.1մգ/մլ կոնցենտրացիային,

0.5մլ/20գ կենդանուն): Մշակումներն իրականացվել են 5 օր շարունակ: Քաղցկեղով հիվանդ կենդանիների հետ աշխատելու դեպքում նշված գործողությունները սկսվել են պատվաստումից 48 ժամ անց:

**Հյուսվածքի պատրաստում:** Վերջին սրսկումից կամ ԳՑՀ ԷՄԱ-ով մշակումից 24 ժամ հետո կենդանիները գլխատվել են, ապա անջատվել են հյուսվածքները: Կենդանիների վախով և ցավով պայմանավորված ստրեսից և դրա հետևանքով արդյունքների աղճատված պատկեր ստանալուց խուսափելու նպատակով մկներն անշարժացվել են և դրանց գլուխները 3-4 վայրկյանով իջեցվել հեղուկ ազոտի մեջ: Այս գործողությամբ սառեցվում է կենդանու գլուխը, և մուկն արագ մահանում է, իսկ հյուսվածքներում ֆիզիոլոգիական կողմնակի երևույթներ չեն դիտվում: Մկան մոտ սոմատիկ ռեֆլեքսների լրիվ անհետանալուց հետո վերցվել են հյուսվածքների նմուշները:

**Հիդրատացիայի որոշում:** Հյուսվածքի հիդրատացիան որոշելու համար հյուսվածքի նմուշները նախ կշռվել են, ապա չորացվել թերմոստատում՝ 24 ժամվա ընթացքում, 105°C պայմաններում, որից հետո կշռվել են ևս մեկ անգամ: Հյուսվածքի հիդրատացիան որոշվել է «թաց» և «չոր» զանգվածների հարաբերակցությամբ՝ արտահայտված չոր զանքվածում ջրի պարունակությամբ (գ/գ):

$$H = \frac{A - B}{B}$$

Որտեղ. H – հյուսվածքի հիդրատացիա

A – հյուսվածքի նմուշի զանգվածը չորացումից առաջ («թաց զանգված»)

B – հյուսվածքի նմուշի զանգվածը չորացումից հետո («չոր զանգված»):


**Իզոտոպային չափումներ:** Ուաբայինի <sup>3</sup>H-ռեցեպտորների քանակը գնահատելու համար փորձարարական կենդանիները ներարկվել են <sup>3</sup>H-ուաբային պարունակող ՖԼ-ով: Ուաբայինի կոնցենտրացիան եղել է 10<sup>-11</sup>Մ-ից 10<sup>-6</sup>Մ: Ներարկումից 30ր անց սկսվել են հյուսվածքներն անջատելու պրոցեդուրաները: Հյուսվածքների անջատված նմուշները լվացվել են եռակի անգամ՝ 10, 5 և 5 րոպե համապատասխանաբար: Դա արվում է միջբջջային տարածությունում աղստրբված և ռեցեպտորի հետ չմիացած ռեդիոակտիվ ուաբայինի հեռացման համար: Ապա հյուսվածքի յուրաքանչյուր նմուշը առանձին անոթների մեջ հոմոգենիզացվել է 50մկլ 68% HNO<sub>3</sub>-ով: Ապա ավելացվել է Բրայի սցինցիլացիոն լուծույթ (2մլ): Ռադիոակտիվությունը որոշվել է «Wallac 1450» հեղուկ սցինցիլացիոն և լյումինեսցենտ» հաշվիչով (Ֆինլանդիա): Արդյունքները հաշվարկվել են յուրաքանչյուր նմուշի չոր զանգվածի հիման վրա:

**ԳՑՀ ԷՄԱ մշակման համար նախատեսված սարքավորում:** Նկար 1-ում պատկերված է սարք, որով իրականացվել է ջրի մշակումը:

Գերցածր հաճախության ԷՄԱ-ի աղբյուրը, որի միջոցով իրականացվել է ջրի մշակումը, պատրաստվել է ԳԱԱ ռադիոֆիզիկայի և Էլեկտրոնիկայի ինստիտուտի մասնագետների կողմից: 10 սմ տրամագծով և 100 մլ ծավալով ապակե տարան (5) դրվել է Հելմհոլցի 2 օղակների մեջ՝ որպես ԳՑՀ ԷՄԱ-ի աղբյուր (4): Կոճը միացված է գեներատորին (1) (ԴՅ-118, արտադրված ՌԴ), որը կարգավորում է իր աշխատանքը: Ազդակը գնում է դեպի միացնող և անջատող սարք (3): Գեներատորը առաջացնում է հարմոնիկ ազդանշան, աղմկամեղմիչ ուժեղարարը (2) (Biophys PA, արտադրված՝ ՀՀ



ԳԱԱ ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտ) ուժեղացնում է այն և ուղարկում Հելմհոլցի օղակներին (4):



1. Հաճախականային գեներատոր ГЗ-118
2. Աղմկամեղմիչ ուժեղարար *biophys PA*
3. Անջատիչ
4. Հելմհոլցի օղակներ
5. Ջրի համար նախատեսված տարա, որն ունի 10սմ տրամագիծ և 100մլ ծավալ

**Նկար 1:** ԳՅՀ ԷՄԱ-ով ջրի մշակման համար նախատեսված սարքավորման սխեմատիկ նկարագրությունը:

Կոճում առաջանում է էլեկտրամագնիսական դաշտ, որը կարգավորվում է գեներատորով և ցածր-ձայնային ուժեղացուցիչով: Հելմհոլցի օղակներում առաջանում է համասեռ (տարածական իմաստով) փոփոխական (ըստ ժամանակի) էլեկտրամագնիսական դաշտ: Գեներատորը կարգավորում է դաշտի հաճախությունը և ինտենսիվությունը (կատարված փորձերում ԷՄԱ-ի ինտենսիվությունը միշտ եղել է 2.5մՏ): Հելմհոլցի օղակները կազմված են երկու հավասար օղակային կոճերից, որոնք դասավորված են համակենտրոն և գուգահեռ:

**Արդյունքների վերարտադրություն:** Փորձերի ընթացքում ստուգիչ և փորձնական խմբերում ներառվել են 10-ական մկներ: Յուրաքանչյուր մկան տվյալ հյուսվածքից (սրտամկան, կմախքային մկան, ինչպես նաև թոքի, լյարդի, փայծաղի, երիկամի պարենխիմ, սարկոմա-180) անջատվել է 10-ական նմուշ: Բոլոր փորձերը կրկնվել են 3 անգամ: Գրաֆիկները և աղյուսակները կառուցվել են օգտագործելով 3 անկախ փորձերի միջին արժեքները՝ իրենց ստանդարտ շեղումներով:

**Վիճակագրական վերլուծություն:** Վիճակագրական վերլուծությունը կատարվել է SPSS 17.0 ծրագրով: Միջինների միջև տարբերությունը գնահատվել է կիրառելով նմուշների համեմատման *T-թեստը*: Իսկ տվյալների հավաստիությունը գրաֆիկներում արտահայտվել է աստղիկների (\*) օգնությամբ (\* P<0.05, \*\* P<0.01, \*\*\* P<0.001):

### ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ ԵՎ ՔՆՆԱՐԿՈՒՄ

Առողջ և սարկոմա-180 կրող մկների տարբեր հյուսվածքների հիդրատացիան և չափաքանակից կախված <sup>3</sup>H-ուրաբայինի կապվածությունը բջջաթաղանթի հետ: Առողջ և պաթոլոգիկ օջախ կրող օրգանիզմում Na/K-ական պոմպի և իր բաղադրամասերի ֆունկցիոնալ ակտիվության մասին խոսելիս նախ որոշվեց պարզել Ա և ՄԿ մկների տարբեր հյուսվածքների հիդրատացիոն վիճակը: Հաստատված է, որ հիդրատացիան հիմնավոր ցուցանիշ է բջջի ֆունկցիոնալ վիճակը գնահատելու համար: Հիդրատացիան

կարող է փոփոխել բջջային գործընթացների բնույթը՝ առաջացնելով բջջի ծավալի մեծացում կամ փոքրացում: Հայտնի է, թե որքան բջջի հիդրատացիան բարձր է, այնքան այն ուռչեցված վիճակում է, իսկ հիդրատացիայի իջնելու՝ դեհիդրատացիայի, հետևանքով բջիջը սմբում է:



Բջջի ուռչելը խթանում է պրոլիֆերացիան, իսկ սմբումը հանգեցնում է դրա հակադարձ վիճակին, որի արդյունքում դիտվում է ապոպտոզ: Հաստատված է, որ քաղցկեղային հյուսվածքը գերհիդրատացված է և կարող է բաղկացած լինել մինչև 90% ջրից: Այստեղ հարց է առաջանում, թե հիդրատացիայի տեսանկյունից ի՞նչ վիճակում են հայտնվում քաղցկեղ կրող օրգանիզմի մյուս, առողջ համարվող օրգան համակարգերի հյուսվածքները, դրանց բաղկացուցիչ մաս կազմող բջիջները: Այդ նպատակով փորձերի առաջին փուլում որոշվեցին և համեմատվեցին Ա և ՄԿ մկների որոշ հյուսվածքների հիդրատացիայի ցուցանիշները: Ա և ՄԿ մկների տարբեր հյուսվածքների հիդրատացիայի տվյալները բերված են աղյուսակ 1-ում:

**Աղյուսակ 1.** Առողջ և սարկոմա-180 կրող մկների տարբեր հյուսվածքների հիդրատացիան:

Հյուսվածք	Առողջ	Սարկոմա-180 կրող	Δ%
<b>Սրտամկան</b>	2.39±0.1	3.3±0.1	↑38.14
<b>Կմախքային մկան</b>	2.36±0.23	3.87±0.21	↑64,23
<b>Թոքի պարենխիմ</b>	2.2±0.15	3.31±0.03	↑50.47
<b>Լյարդի պարենխիմ</b>	2.05±0.12	3.27±0.15	↑58,93
<b>Փայծաղի պարենխիմ</b>	2.23±0.13	2.8±0.14	↑25.84
<b>Երիկամի պարենխիմ</b>	2.05±0.13	3.36±0.19	↑63,76

Ինչպես երևում է, բոլոր ուսումնասիրված հյուսվածքների հիդրատացիան ՄԿ կենդանիների մոտ ավելի բարձր է, քան Ա-ի մոտ: Դա ցույց է տալիս, որ օրգանիզմում քաղցկեղի առկայության պարագայում ոչ միայն գերհիդրատացված վիճակում հայտնվում է հենց քաղցկեղային հյուսվածքը, այլ ընդհանրապես, օրգանիզմի ընդհանուր հիդրատացիոն ֆոնը բարձրանում է: Այսպիսով, հիդրատացիայի աճը օրգանիզմում առկա պաթոլոգիայի ցուցանիշ է:

Բջջի ուռչելը տանում է բջջաթաղանթում ֆունկցիոնալ ակտիվ Na/K-ական պոմպի և այլ սպիտակուցային մոլեկուլների թվաքանակի աճի, մինչդեռ սմբումը՝ նվազման: Պոմպի α ենթամիավորի α<sub>1</sub> ենթատեսակը ցուցաբերում է ցածր խնամակցություն ուաբայինի նկատմամբ, α<sub>2</sub>-ը՝ միջին, իսկ α<sub>3</sub> և α<sub>4</sub> ենթատեսակները բավականին զգայուն են: Ուսումնասիրվել են Ա և ՄԿ օրգանիզմներում հիդրատացիայի արձագանքը ուաբայինի տարբեր չափաքանակների ազդեցությանը:



ա)



բ)

**Նկար 2.** Առողջ (ա) և սարկոմա-180 կրող (բ) մկների տարբեր հյուսվածքների ( —◆— - սրտամկան, —■— - կմախքային մկան, —▲— - թոքի պարենքիմ, —×— - լյարդի պարենքիմ, —\*— - փայծաղի պարենքիմ, —●— - երիկամի պարենքիմ, —+— -սարկոմա-180) հիդրատացիայի վրա չափաքանակից կախված ուաբայինի ազդեցությունը:

Ստացված արդյունքները ցույց են տալիս, որ ուսումնասիրված հյուսվածքները գերհիդրատացված են նաև ուաբայինի ազդեցության պայմաններում (նկար 2):

ա)

բ)



**Նկար 3.** Առողջ (ա) և սարկոմա-180 կրող (բ) մկների տարբեր հյուսվածքներում ( —◆— - սրտամկան, —■— - կմախքային մկան, —▲— - թոքի պարենքիմ, —×— - լյարդի պարենքիմ, —\*— - փայծաղի պարենքիմ, —●— - երիկամի պարենքիմ, —+— -սարկոմա-180) <sup>3</sup>H-ուաբայինի կապվածությունը: Քանի որ վերցվել են <sup>3</sup>H-ուաբայինի կոնցենտրացիաներ, որոնք միմյանցից տարբերվում են տասնապատիկ անգամներով, ստացված թվերը բերվել են բնական հիմքով լոգարիթմի՝ տվյալները համեմատելի դարձնելու համար:

Արդյունքում՝ հիդրատացիան ոչ միշտ է ուղեկցվում ուաբայինի կապվածության ավելացմամբ: Սա պայմանավորված է ուաբայինի նկատմամբ Na/K-ական պոմպի խնամակցության, նաև ներբջջային Ca<sup>2+</sup>-ի պարունակության փոփոխություններով:

Նորմայում և պաթոլոգիայում բջջի հիդրատացիայի վրա Na/K-ական պոմպի  $\alpha$  ենթամիավորի անհատական դերը պարզելու նպատակով ուսումնասիրվել է ուաբայինի  $10^{-6}U$  ( $\alpha_1$ ),  $10^{-8}U$  ( $\alpha_2$ ) և  $10^{-11}U$  ( $\alpha_3$ ) կոնցենտրացիաների ազդեցությունը Ա և ՄԿ կենդանիների տարբեր հյուսվածքների հիդրատացիաների վրա (համապատասխանաբար աղյուսակ 2 և 3): Ուաբայինի այս կոնցենտրացիաներն ընտրվել են Na/K-ական պոմպի ուաբայինի նկատմամբ ցածր ( $\alpha_1$ ), միջին ( $\alpha_2$ ) և գերզգայունություն ( $\alpha_3$ ) ցուցաբերող ենթատեսակների ուսումնասիրման համար:

**Աղյուսակ 2:** Առողջ մկների տարբեր հյուսվածքների հիդրատացիայի վրա ուաբայինի ազդեցությունը  $10^{-11}U$ ,  $10^{-8}U$ ,  $10^{-6}U$  կոնցենտրացիաներում:

Հյուսվածք	Հյուսվածքի հիդրատացիան (ջրի պարունակությունը գ/գ չոր քաշ)						
	Ուաբայինի կոնցենտրացիան (U)		Δ%	Ուաբայինի կոնցենտրացիան ( $10^{-8}U$ )	Δ%	Ուաբայինի կոնցենտրացիան ( $10^{-6}U$ )	Δ%
	0	$10^{-11}$					
Սրտամկան	2.39±0.1	2.42±0.02	↑1.38	2.7±0.26	↑13.02	2.31±0.05	↓3.47
Կմախքային մկան	2.36±0.23	2.34±0.12	↓0.8	3.36±0.25	↑42.6	3.42±0.3	↑45.14
Թոքի պարենխիմ	2.2±0.15	2.39±0.15	↑8.4	2.24±0.06	↑2.01	2.17±0.3	↓1.46
Լյարդի պարենխիմ	2.05±0.12	2.34±0.22	↑13.78	2.55±0.18	↑24.01	2.92±0.17	↑42.16
Փայծաղի պարենխիմ	2.23±0.13	1.57±0.08	↓29.57	2.44±0.25	↑9.84	3.15±0.3	↑41.44
Երիկամի պարենխիմ	2.05±0.13	1.72±0.08	↓16.04	2.88±0.19	↑40.32	3.09±0.15	↑50.66

Աղյուսակ 2-ում ներկայացված տվյալները ցույց են տալիս, որ Ա մկների մոտ  $10^{-11}U$  ուաբայինի ներմուծումն էական ազդեցություն թողել է փայծաղի պարենխիմային հյուսվածքում (29.57% դեհիդրատացիա), իսկ կմախքային մկանների հիդրատացիան առանձնապես չի փոփոխվել՝ դիտվել է 0.8% դեհիդրատացիա, որը վիճակագրորեն հավաստի չէ ( $p>0,05$ ): Այս տվյալներից ելնելով պարզ է դառնում, որ  $10^{-8}$  և  $10^{-6}U$  կոնցենտրացիաներում դիտարկված հիդրատացնող էֆեկտն առկա է պոմպի պասիվացման /ինակտիվացիայի/ հետևանքով:

ՄԿ մկների մոտ հյուսվածքները, ունենալով առողջների համեմատ ավելի բարձր նախնական հիդրատացիա,  $10^{-11}U$  ուաբայինի ազդեցությամբ դեհիդրատացվել են (բացառությամբ թոքի և երիկամի պարենխիմների): Մինչդեռ  $10^{-8}U$  և  $10^{-6}U$  կոնցենտրացիաներում բոլոր հյուսվածքներում դիտվում է հիդրատացիայի բարձրացում: Այստեղ բացառություն է կազմում սրտամկանը, որտեղ ուաբայինի բոլոր կոնցենտրացիաներում դիտվում է դեհիդրատացիա:

Աղյուսակ 3-ում ներկայացված տվյալներից երևում է, որ սարկոմայի հյուսվածքի հիդրատացիան պակաս զգայուն է  $10^{-6}U$  կոնցենտրացիայով ուաբայինի նկատմամբ, քան  $10^{-11}U$  և  $10^{-8}U$  կոնցենտրացիաներում: ՄԿ մկների մոտ  $10^{-11}U$  ուաբայինի արտահայտված դեհիդրատացնող ազդեցությունը, ինչպես նաև ուաբայինի  $10^{-8}U$  և  $10^{-6}U$  կոնցենտրացիաներում Ա և ՄԿ կենդանիների հյուսվածքներում հիդրատացիան, ցույց է

տալիս, որ գոյություն ունի պաթոլոգիայի հանդեպ զգայուն  $\alpha$ -ենթամիավորից կախյալ բջջի հիդրատացիան ղեկավարող մեխանիզմ:

**Աղյուսակ 3:** Սարկոմա-180 կրող մկների տարբեր հյուսվածքների հիդրատացիայի վրա ուաբայինի ազդեցությունը՝  $10^{-11}U$ ,  $10^{-8}U$ ,  $10^{-6}U$  կոնցենտրացիաներում:

Հյուսվածք	Հյուսվածքի հիդրատացիան (ջրի պարունակությունը գ/գ չոր քաշ)						
	Ուաբայինի կոնցենտրացիան (U)		Δ%	Ուաբայինի կոնցենտրացիան ( $10^{-8}U$ )	Δ%	Ուաբայինի կոնցենտրացիան ( $10^{-6}U$ )	Δ%
	0	$10^{-11}$					
Սրտամկան	3.3±0.1	3.25±0.01	↓1.5	2.5±0.01	↓24.24	3±0.01	↓9.09
Կմախքային մկան	3.87±0.21	2.64±0.14	↓31.78	4.63±0.33	↑19.64	4.41±0.23	↑13.95
Թոքի պարենքիմ	3.31±0.03	3.62±0.21	↑9.37	5.75±0.18	↑73.72	3.67±0.23	↑10.88
Լյարդի պարենքիմ	3.26±0.15	2.95±2.27	↓9.64	3.88±0.35	↑18.84	3.94±0.22	↑20.67
Փայծաղի պարենքիմ	2.8±0.14	2.7±0.14	↓3.57	2.93±0.33	↑4.64	3.14±0.23	↑12.14
Երիկամի պարենքիմ	3.36±0.19	3.52±0.16	↑4.86	3.56±0.16	↑6.05	3.44±0.16	↑20.47
Սարկոմա-180	4.8±0.33	4.4±0.4	↓8.33	5.66±0.28	↑17.92	4.97±0.32	↑3.54

Անհրաժեշտություն է ծագում ավելի մանրամասնորեն ուսումնասիրել Na/K-ական պոմպի  $\alpha$  ենթամիավորի արձագանքը օրգանիզմում պաթոլոգիայի օջախի առկայությանը և ուաբայինի ազդեցությանը, որի նպատակով իրականացվեց փորձերի հաջորդ խումբը: Ուսումնասիրվեց Ա և ՄԿ մկների մոտ տարբեր հյուսվածքներում ուաբայինի տարբեր կոնցենտրացիաների ( $10^{-11}U$ ,  $10^{-8}U$ ,  $10^{-6}U$ ) կապվածությունը Na/K-ական պոմպի  $\alpha$  ենթամիավորի ( $\alpha_1$ ,  $\alpha_2$ ,  $\alpha_3$ ) հետ:

Ա և ՄԿ մկների տարբեր հյուսվածքների ռեցեպտորների հետ  $^3H$ -ուաբայինի կապվածության ուսումնասիրությունը ցույց տվեց, որ չնայած ՄԿ մկների բոլոր հյուսվածքները հիդրատացված են Ա-երի հետ համեմատ (աղյուսակ 1),  $^3H$ -ուաբայինի կապվածությունը մկանային բնույթի հյուսվածքների  $\alpha_3$  ենթատեսակի հետ բարձրացել էր, մինչդեռ չգրգռվող հյուսվածքներում՝ իջել (աղյուսակ 4): Սա շատ հետաքրքրական փաստ է, քանի որ հիդրատացիայի բարձրացման հետ կանխատեսվում էր Na/K-ական պոմպի ակտիվ մոլեկուլների թվաքանակի ավելացում, և հետևաբար նաև ուաբայինի ռեցեպտորների ( $\alpha$  ենթամիավորի) քանակական ավելացում, որի արդյունքում  $^3H$ -ուաբայինի կապվածությունը կավելանար բոլոր ուսումնասիրվող հյուսվածքներում:

**Աղյուսակ 4:** Առողջ և սարկոմա-180 կրող մկների տարբեր հյուսվածքների բջջաթաղանթներում  $10^{-11}U$  ուաբայինի կապվածությունը  $\alpha_3$  ենթատեսակի հետ:

Հյուսվածք	Առողջ	Սարկոմա-180 կրող	Δ%
Սրտամկան	18.11 ±0.4	18.67 ±0.1	↑3.09
Կմախքային մկան	16.65 ±0.38	17.28 ±0.39	↑3.79
Թոքի պարենքիմ	18.45 ±0.75	18.23 ±0.59	↓1.21
Լյարդի պարենքիմ	17.39 ±0.38	15.79 ±0.48	↓9.16
Փայծաղի պարենքիմ	18.49 ±0.63	17.32 ±1.14	↓6.31
Երիկամի պարենքիմ	17.06 ±0.61	16.95 ±0.43	↓0.66
Սարկոմա-180	-	16.64 ±0.68	-

*Աղյուսակ 5: Առողջ և սարկոմա-180 կրող մկների տարբեր հյուսվածքների բջջաթաղանթներում  $10^8U$  ուաբայինի կապվածությունը  $\alpha_2$  ենթատեսակի հետ:*

Հյուսվածք	Առողջ	Սարկոմա-180 կրող	$\Delta\%$
Սրտամկան	21.46 $\pm$ 0.64	20.72 $\pm$ 0.1	↓3.46
Կմախքային մկան	18.81 $\pm$ 0.5	20.03 $\pm$ 0.87	↑6.52
Թոքի պրենքիմ	21.44 $\pm$ 1.06	21.92 $\pm$ 0.29	↑2.24
Լյարդի պարենքիմ	18.77 $\pm$ 0.55	18.97 $\pm$ 0.35	↑1.08
Փայծաղի պարենքիմ	21.56 $\pm$ 0.46	20.64 $\pm$ 1.22	↓4.3
Երիկամի պարենքիմ	19.94 $\pm$ 0.6	19.64 $\pm$ 0.09	↓1.5
Սարկոմա-180	-	19.88 $\pm$ 0.75	-

*Աղյուսակ 6: Առողջ և սարկոմա-180 կրող մկների տարբեր հյուսվածքների բջջաթաղանթներում  $10^6U$  ուաբայինի կապվածությունը  $\alpha_1$  ենթատեսակի հետ:*

Հյուսվածք	Առողջ	Սարկոմա-180 կրող	$\Delta\%$
Սրտամկան	25.14 $\pm$ 0.49	25.87 $\pm$ 0.1	↑2.9
Կմախքային մկան	23.75 $\pm$ 0.5	24.67 $\pm$ 0.26	↑3.87
Թոքի պրենքիմ	26.04 $\pm$ 0.77	25.53 $\pm$ 0.29	↓1.99
Լյարդի պարենքիմ	24.25 $\pm$ 0.45	23.52 $\pm$ 0.08	↓3.02
Փայծաղի պարենքիմ	24.99 $\pm$ 0.48	25.19 $\pm$ 1.81	↑0.77
Երիկամի պարենքիմ	24.51 $\pm$ 0.52	24.61 $\pm$ 0.66	↑0.42
Սարկոմա-180	-	24.4 $\pm$ 0.22	-

